ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը:**

1) դափն-արդ, ագ-ազ, ոսկ-որել, գեր-արել
2) խա-շիկ, հա-շտակել, ս-րթնել, քարակո-
3) սաղավար-, խր-վիլակ, զար-ուղի, ակնթար-
4) փա-չել, թ-պոտ, կթ-ա, դժո-ք

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) չո-որդ, ու-ակի, եր-ենցաղ, հո-եկ
2) բնօ-ան, հակընե-եմ, մ-կաշունչ, հո-երգություն
3) տա-ական, ըն-արմանալ, ի-երորդ, անդո-ավետ
4) ք-ախույզ, վշտա-ուկ, գործու-ում, բե-իություն

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՏԻԳՐԱՆ ԵՐԿԲՈՐԴ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ
2) ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, ՆՈՐ ՆՈՐՔ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ
3) ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
4) ՀՈԲ ԵՐԱՆԵԼԻ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԵՊԱՇՏ, ԵՐԵՎԱՆԻ ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) կղզյակ, քրտնաթոր, տրտմաշուք, բուսական
2) հոգեցունց, մանրուք, պարտիզպան, ուխտադրուժ
3) ընչաքաղց, ձվաձև, հոգատար, աստղանիշ
4) բարենպաստ, ակնոցավոր, ըմպանակ, գործնական

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկն է շեշտվում:**

1) ծանրաձող, վերերկրային, ուստր
2) կարծրանալ, ի նշան, որևէ
3) ծաղկափթիթ, երկրորդ, հենց որ
4) տեխնիկայի, որպես, ամենամեծ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված *ռ*-ն արտասանվում *օ*:**

1) ձկնորս, կարճառտ, ցածրոռակ
2) չափոռոշիչ, կրծոսկր, անոողոք
3) վճռոռոշ, ենթառրովայնային, արագոտն
4) եղբորոռրդի, չորքոտանի, ցածրառրմ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) արգելել, խոչընդոտել, կաշկանդել, խթանել
2) զիջել, ընկրկել, նահանջել, տեղի տալ
3) հնամենի, դարավոր, դարակազմիկ, վաղնջական
4) աժդահա, վիթխարի, հսկա, անհողդողդ

8 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Բոլոր չվճարված հարկերը տասնօրյա ժամկետում բռնագրավելու որոշում ընդունվեց:
2) Նրա մեղանչումները նոր դժբախտություններ բերեցին արքայական տոհմին:
3) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
4) Անձրևից հետո անցորդները գայթում էին և դժվարությամբ էին առաջ շարժվում:

9 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***սուրը պատյան դնել*** - կռիվը դադարեցնել, ***խարիսխ գցել*** - սկսված գործը ձախողել
2) ***ձեռքերը ծալած նստել*** - անգործ լինել, ***եղանակ ստեղծել*** - որևէ գործում որոշիչ դեր ունենալ
3) ***պատին դեմ անել*** - անելանելի վիճակի մեջ դնել, ***ջուր ծեծել*** - ավելորդ, անօգուտ խոսել
4) ***հալած յուղի տեղ դնել*** - առանց կասկածելու ընդունել, ***շատ ջուր վերցնել*** - վեճերի առիթ տալ

10 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) ասպնջական-անհյուրընկալ, հորդածուփ-անջրդի
2) խորունկ-ծանծաղ, վեհանձն-նվաստ
3) աստանդական-նստակյաց, տարակարծիք-անտարակույս
4) վաղեմի-նոր, ճապաղ-մերժելի

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) ապուխտ, համահունչ, ենթակա, դիմում
2) դպրոց, կարգին, բամբակ, դժպատեհ
3) տմարդի, տարտամ, դանդաղկոտ, պարագիծ
4) ապերասան, տրամադիր, մակագիր, առտնին

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) հոգեպարար, գետնանուշ, որդեգիր
2) սպառազեն, քաջազուն, աղեկտուր
3) գյուղեգյուղ, գետնատարած, անասնաբույժ
4) տարեվճար, դառնանուշ, բարեհունչ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -*եր* վերջավորությամբ:**

1) գիսաստղ, կողաթև, թռչնաբույծ, կայսր
2) բնագիր, անվադող, պահանջատեր, ուղեցույց
3) ցուցափայտ, երկրամաս, անասնակեր, սեպագիր
4) սպի, կցակար, գրավատուն, սալաքար

14 **Տրված հատվածներում հոդի ո՞ր տեսակը գործածված *չէ:***

- Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:
- Իրիկնաժամին նստում եմ մենակ Կանաչ առվի մոտ՝ ուռիների տակ:
- Չե՞ս զարմանում, Տե՛ր իմ, որ ես դիմում եմ քեզ, Ես՝ բանաստեղծս անահ և մարտնչողս արի…

1) ստացական
2) դիմորոշ
3) որոշիչ
4) ցուցական

15 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Առանց ընկճելու երկրի թշնամուն՝ Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
2) Ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
3) Նա սկսեց իր հաղթական արշավանքները, նախքան թշնամին կհարձակվեր:
4) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր աղջկան որևէ չեզոք տեղում և հասցներ ագարակ:

16 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անկախ դերբայներ:**

1) թրթռացող, վախեցած, հագել
2) փախչելիս, սուզվում, հարցնելով
3) վարկած, ստուգվող, զայրանալ
4) անցնելիս, ծուլացած, կորչել

17 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) կառչել, ասել, թռչել, զբոսնել
2) կանչել, բռնել, լցնել, արտագրել
3) կոտրատել, երթևեկել, վերափոխել, տալ
4) ուտել, ելնել, սովորել, մթնել

18 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Նա գլխաբաց էր, երեսը՝ անլվա, աչքերի սպիտակուցները՝ դեղնած, մազերը՝ գզգզված, դեմքը՝ մագաղաթի պես գունատ:
2) Լևոնը փաթաթվեց մոր պարանոցին և սկսեց բարձր ձայնով հեծկլտալ:
3) Զգացի, որ տղան շատ հուզվեց իմ այդ խոսքից, և փորձեցի մեղմել անհաճո իրավիճակը:
4) Նա վաղուց էր ինձ խոստովանել, որ սիրահարված է այդ աղջկան:

19 **Ո՞ր նախադասության մեջ *ու* հոլովման ենթարկվող գոյական *չկա:***

1) Ամուսինն անցյալ տարի էր մեռել՝ ոչ մի ժառանգություն չթողնելով:
2) Իրիկնապահին Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր:
3) Արտի վրա երևում էին հատուկենտ կաղնիներ՝ ծռված, կռացած, կայծակից խանձված:
4) Նրանք չիմացան, թե ինչու էր զայրացել պատերազմի աստվածը:

20 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են ածականներ:**

1) արևելյան, թունավոր, մարդկային, քնքուշ
2) կողմնորոշիչ, բանախոս, պերճաշուք, մեղմ
3) ուշիմ, գծավոր, պատեհապաշտ, դաժան
4) գիտական, ապաշնորհ, առատաձեռն, բարի

21 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

1) Վերջապես լռեցին:
2) Վախից կանգ առավ:
3) Կապոցները վերցրինք:
4) Բոլորը գլուխ էին պահում:

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Նա լսում էր անտուն, հալածական քամուն, …….

1) որ հավաքել էր իր անկայան, անհատնում ճանապարհները անցնելիս:
2) որը հազար-հազար մեղուշ ձայներով հնչում էր զօրուգիշեր:
3) որովհետև նրա հոգին լսում էր նրանց երգերը:
4) որ բուրմունքի մորմոքով գեղգեղում էին սերն ու բյուրեղային արցունքները:

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա, ով իր ամբողջ կյանքում երազել էր հոգևորական դառնալ ու աստծուն նվիրաբերվել, իրենից անկախ ականջ դրեց արյան հեռավոր կանչերին և հասկացավ, որ իր իսկական կոչումը սկզբից նեթ եղել էր Նանեի պաշտամունքին ծառայելը:

1) 

2) 

3) 

4) 

24 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Նա պետք է հսկեր տունը նորոգող բանվորներին ու քաղհան անողների աշխատանքը:
2) Դասական արվեստը միշտ ունի իր հետևորդներին:
3) Լուսնի խավարումը համընկավ այդ ահեղ ճակատամարտի սկսվելուն:
4) Ոստիկանները կատարված հանցանքի մեջ այդ երիտասարդին էին կասկածում:

25 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Երևի քո ուզածը հենց դա է:*
   Երևի հենց դա այն է, ինչ դու ուզում ես:
2) *Լիլիթը ամեն անգամ այդ պատմությունը հիշելիս չէր կարողանում զսպել հուզմունքը:*
   Երբ Լիլիթը ամեն անգամ այդ պատմությունը հիշում էր, չէր կարողանում զսպել հուզմունքը:
3) *Այդ մասին պատմում էին բոլորը՝ իրադարձություններին ականատես եղած մարդիկ:*
   Այդ մասին պատմում էին բոլոր այն մարդիկ, ովքեր ականատես էին եղել իրադարձություններին:
4) *Դարասկզբին այդ մարդու անունն անբաժան էր ազգային կյանքով հետաքրքրվողներից:*
   Դարասկզբին այդ մարդու անունն անբաժան էր նրանցից, ովքեր հետաքրքրվում էին ազգային կյանքով:

26 **Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:**

1) Մնացողները կծիկ են դառնում Թրջվելու վախից: *(դերբայ)*
2) Տխրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչյուն: *(ածական)*
3) Ի՞նչ է մնում գնացողին, Ի՞նչ է մնում ինձ անելու: *(դերանուն)*
4) Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ Լույսի խտուտից զարթնած սարերը: *(գոյական)*

27 **Ո՞ր տարբերակում ընդգծվածներից ոչ մեկը որոշիչ *չէ:***

1) Հեքիաթդ **անվերջ** օրորում, Իլիկդ խոսում է **անուշ**:
2) Ճեղքելով կապույտ անապատն **անհուն**՝ Ոսկե քարավաններն անցնում են **կրկին:**
3) Ես մի ճամփորդ եմ՝ մթնում **մոլորված**, Ու հոգնած սիրտս դարձել է **խոնարհ**:
4) **Ցուրտ** ցերեկներից հավիտյան դժգոհ՝ Սիրտս **կարոտ** է քո գգվանքներին:

28 **Ո՞ր նախադասության մեջ բուք *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Թեև քաղաքը մոտ էր ճանապարհը մեզ ծանոթ այնուամենայնիվ ուրիշ աշխարհ թվաց ձորի այդ անկյունը:
2) Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:
3) Քամին Արագածի արևի ոսկեզօծումից զարթնող բնության թովչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիտ լճակի հովը կբերի:
4) Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ողջունելով միջազգային գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին նա նշեց անկայուն երևույթների հետազոտության կարևորությունը:

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Զարթնում եմ. ամեն ինչ չքանում է, միայն դեռևս կարծես շարունակում եմ լսել նրանց մրմունջը:
2. Նրանցից ոչ մեկը չի փախչում. բռնում եմ, շոյում, սիրում, հանկարծ զգում եմ, որ երազ է, բայց շարունակվում է երազը. աղավնիները գլխիս վրա են, ուսերիս:
3. Ես երազումս տեսնում էի Ակոբի աղավնիները. իջել են նրանք գլխիս, ուսերիս, թևերիս:
4. Դրսում վառ լույս է արդեն, բայց դեռ երկար շարունակվում է աղավնիների երազի անիմանալի խայտանքը:

1) 3, 4, 2, 1
2) 3, 2, 1, 4
3) 4, 3, 2, 1
4) 4, 1, 3, 2

30 **Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Մեր հրետանին կանգնել էր Մեծամոր բլրի տակ, և նրան չէին օգնում ոչ հին մագաղաթները, ոչ հիքսոսները, ոչ էլ Երկիրը գնդած գիտնականները, և կռվողներն աղերսում էին գեթ Արարատյան հանրապետություն, հովտի գոնե կեսը: Ամբողջ օրը մեր հրետանին քանդուքարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերքը լծվեցին և առանց ձայնի արտասվելով՝ թնդանոթները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր՝ Ապարան: Հետո թշնամին գովել էր, թե այդ հայերը կարծես թե տղամարդ են. կռվում են:

1) գիտական
2) վարչական
3) հրապարակախոսական
4) գեղարվեստական

31 **Նշվածներից որի՞ն Ե. Չարենցը «Հարդագողի ճամփորդները» բալլադում *չի* անդրադառնում:**

1) երազի և իրականության հակադրությանը
2) իր՝ բանաստեղծի հանդեպ մարդկանց հեգնանքին
3) լավ, բարի գործի անմահության գաղափարին
4) գեղեցիկի, կատարյալի փնտրտուքին

32 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված *չկա:***

- *«Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը»:*
- *«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի՝ իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:*
- *«Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով գլուխ՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ՝ թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ»:*

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

33 **Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի որ ստեղծագործությունից է:**

1. «Անուշ»
2. «Թմկաբերդի առումը»
3. «Փարվանա»
4. «Հայրենիքիս հետ»

ա. Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով…

բ. Հույսը հատավ… Ու լաց եղավ,
Էնքա՜ն արավ լաց ու կոծ,
Որ լիճ կտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց:

գ. Ու մարդասպանը դուրս եկավ ձորից՝
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

դ. Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ո՛չ բախտի, փառքի, ո՛չ մեծ հաղթության,
Ո՛չ սիրած կնկա տված բաժակին…

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
2) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

34 **Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՜ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է որպես աղոթք
Արքայական քո լեզուն:

1) «Որպես Լաերտի որդին»
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես»
3) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4) «Որպես լեռն է մեր պայծառ»

35 **«Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:
2) Մեծ Մհերը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր դյուցազնական ուժը և չափահաս դառնալուց հետո տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
3) Քանի որ Փոքր Մհերը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
4) Մանուկ Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղր ու կարագով:

36 **Ո՞ր հատկանիշը բնորոշ *չէ* էպիկական (պատմողական) պոեմին:**

1) հերոսների արարքների ու բախումների պատկերումը
2) չափածո ստեղծագործություն լինելը
3) հեղինակի նվազ միջամտությունը
4) հերոսի կամ հեղինակի ներքին մենախոսությանը մեծ տեղ տալը

37 **Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

1) երիտասարդ տարիքում մեռնելը
2) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
3) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
4) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը

38 **Ի՞նչ երկու չարիքների մասին է խոսվում Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի «Երկու չարյաց փոքրագույնը» գլխում:**

1) դավանափոխության և պետականության կորստի
2) Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու
3) Հայր մարդպետի և Մերուժան Արծրունու
4) Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած քաղաքականության

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

հայթհայթել, երկորյակ, ամպագորգոռ, դաստիարակ, ամբարտավան, կորնթարթ, ժպիրի, ոստրե, դիցուկ, դշխուհի, բամբեր, խարխաբել:

40 **Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**

կշտամբել-պախարակել, անվրեպ-անշեղ, դրոշմել-տպել, խեղաթյուրել-գանահարել, խրթին-մանվածապատ, անձկալի-տենչալի, շիվ-ոստյուն, հտպիտ-շաղակրատ:

41 **Տրված շարքում քանի՞ տեսակ դերանուն կա.**

դու, այս, այդքան, մեկմեկու, այնպես, միևնույն, ամենքը, համայն, ձեզ, բոլոր:

42 **Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Ու հենց կուսակալը կորցրեց կապն այն ամենի հետ, ինչ շրջապատում էր նրան իրականում, հանկարծ լույսի ցոլքը կուրացրեց աչքերը: Նա ձեռքով ծածկեց դեմքը՝ պաշտպանվելով իրեն սպառնացող անհայտ վտանգից:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ ստորակետ պիտի դրվի:**

- Մի քանի վայրկյան հետո բացվեցին բերդի երկու աշտարակների միջև գտնվող երկաթյա դռները խուլ ճռնչալով:
- Դղյակի եկեղեցու ժամհարը զարկեց կոչնակը մարդկանց հրավիրելով աղոթքի և աճապարանքով իջավ գավիթ:
- Հաշվի առնելով Չարենցի մեծ հեղինակությունը բոլորս տեղի տվեցինք նրա տեսակետը անհնար էր վիճարկել:
- Երկրագնդի վրա ապրող մեծաթիվ թե փոքրաթիվ բոլոր ժողովուրդների թիվը հասնում է մոտ երկու հազարի:
- Երկաթակուռ դարպասից ներս մտնող տղամարդկանցից առաջինը պարթևահասակ էր սև բեղ-մորուքով:
- Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը մի առանձնակի դյութական տպավորություն գործեց:

44 **Պնդումներից քանի՞սն են սխալ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

- Աղունը համաձայնում է ամուսնանալ Սիմոնի հետ այն բանից հետո, երբ իմանում է, որ իր հորաքույր Մանիշակի գյուղն է գնալու:
- Ունևոր Իշխան հոր տնից Աղունը հարս էր եկել գրեթե առանց օժիտի:
- Սիմոնի ծնողները և հարազատները սկզբում մեծ խանդավառությամբ էին ընդունել Աղունին:
- Աղունը ցավով է նշում, որ իր որդի Արմենակը ժառանգել է ոչ թե իր հայր Իշխանի, այլ սկեսրայր Աբելի խառնվածքը:
- Աղունը անսովոր էր մեծ ընտանիքում ապրելուն, քանի որ հայրական տանը ինքն ընտանիքի միակ զավակն էր:
- Իշխանը օգնում է, որ իր դուստրն ու Սիմոնը նոր տուն կառուցեն ու առանձին ապրեն:

45 **Նշել այն բառերի համարները, որոնց բոլոր վանկերը փակ են.**

1. հնչեցնել, 2. կարկաչել, 3. հիշեցնել, 4. բնաշխարհ, 5. բորբոքվել, 6. հյուրընկալ, 7. ընթերցել, 8. ինքնավար, 9. ընկղմել:

46 **Նշել բարդ բառերի համարները.**

1. ամրոցամերձ, 2. դասացուցակ, 3. կրափոշի, 4. նրբաքիմք, 5. առատաձեռն, 6. յուրօրինակ, 7. գովազդատու, 8. առնտուր, 9. տեղատարափ:

47 **Տրվածներից որո՞նք են բաղադրյալ ժամանակաձևեր.**

1. մոտ եկավ, 2. պիտի վերադառնամ, 3. հետ եմ դառնում, 4. չի հավատա, 5. չպետք է ներես, 6. երես մի՛ տուր, 7. տարավ-բերեց, 8. գլխի կընկնի, 9. հարց եմ տալիս:

48 **Նշել նախադասության այն անդամների համարները, որոնց շարահյուսական պաշտոնը ճիշտ է նշված:**

Միջօրեին տաքանում է հողը, այգեստանները շոգից անշարժանում են. գոյանում է կարծես հանճարեղ նկարչի կախարդական վրձնահարվածի մի չնաշխարհիկ բնանկար, և օդը հագենում է հողի ու արևի արբեցնող բուրմունքով:

1. **միջօրեին -** ժամանակի պարագա
2. **տաքանում է -** պարզ ստորոգյալ
3. **շոգից -** պատճառի պարագա
4. **բնանկար -** ուղիղ խնդիր
5. **արբեցնող -** որոշիչ
6. **բուրմունքով -** ներգործող անուղղակի խնդիր

49 **Նշել Ա. Իսահակյանի ստեղծագործությունների համարները.**

1. «Ռավեննայում», 2. «Մեր պատմիչները և մեր գուսանները», 3. «Օտար, ամայի ճամփեքի վրա», 4. «Հայրենի հողը», 5. «Հեռացումի խոսքեր», 6. «Հավերժական սերը», 7. «Մի մրահոն աղջիկ տեսա», 8. «Դանթեական առասպել», 9. «Վարք մեծաց»:

50 **Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:**

1. Արտս խոզանով մընաց,
   -Կ'երթա՜լուսնակը-
   Դեզերով լեռ եմ շինած,
   Սի՜րտս է կըրակը:
2. Կ'ուզեմ որ մեռնին տիվ ու ժամանակ՝
   Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր:
3. Եվ ահա բարեբեր ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ
   Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կընծայեր…
4. Ո՜հ, իմ սիրտը կտրատվում է՝
   Տեսանելով այսպես սեր
   Դեպի թշվառ մի հայրենիք,
   Որ ոտնակոխ եղած էր:
5. Այս է զարմանք հիանալի,
   Որ կու լինի վերայ երկրի…

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) երկրե(երկիր), (քաջ)առողջություն, (նոր)խարբերդցի
2) (հյուսիս)արևմտյան, օրն(ի)բուն, (առ)այն
3) (հինգ)հարկանի, փոխ(ծովակալ), ի(մի)բերել
4) (մեծ)մասամբ, (քարե)դարյան, ի(սպառ)

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատներն են միավանկ:**

1) սրբազան, տարկետում, հայրենադարձ
2) ենենգադավ, հպանցիկ, գարեջուր
3) վարդաբույր, գրադարան, ծաղկափթիթ
4) թիավարել, ուսանող, բարձրաշխարհիկ

53 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **տավիղ** - լարավոր երաժշտական գործիք, **անսալ** – հնազանդվել մեկի խոսքին
2) **մարմաջ** - բուռն ձգտում, **երախտիք** - ուրիշի համար արված բարի գործ
3) **պատրվակ -** մտացածին պատճառ, **խոյակ -** քանդակազարդ սյունագլուխ
4) **ընկեցիկ -** ծնողներից լքված երեխա, **դիպակ** - որևէ ստեղծագործության հատված

54 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-այինն*** - գիտխորհուրդ, նրբաջիղ, դիրքավորում
2) ***-ու*** - բնակվարձ, առաստաղ, այցելություն
3) ***-մունք*** - համտեսել, ավարատենչ, ճարտասան
4) ***-անի*** - ազգանուն, վարչապետ, գեղջուկ

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Կժերն ուսած՝ թովռալով Ջուրն են իջնում աղջիկներ …
2) Էն ո՞ւմ յարն է նստած լալիս Հոնգուր-հոնգուր էն սարում …
3) Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ, Թե՝ դրա օրը լացով անց կենա …
4) Ա՜յ, պա՛ղ ջրեր, զուլա՛լ ջրեր, Որ գալիս եք սարերից…

56 **Ո՞ր տարբերակում անկանոն բայ *չկա:***

1) Աչքս դիպավ աչքի բոցին, Ու գլուխս կախեցի…
2) Փողոցներն ահա դադար են առնում, Ննջում են խաղաղ խրճիթ ու պալատ:
3) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար:
4) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:**

1) օգուտ, նախորդ, մինչդեռ -*նյութական*
2) ամենքը, արդեն, գուցե -*նյութական*
3) հենց որ, սոսկ, իհարկե -*վերաբերմունքային*
4) որովհետև, շնորհիվ, հանձին -*քերականական*

58 **Ո՞ր տարբերակում անենթակա նախադասություն կա:**

1) Երբ հերկածիս համար Ինձ հատուցող չկա, Էլ խոպանն ու խութը Ինչպե՞ս հերկեմ:
2) Ժողովրդական առածն ասում է. «Պտուղը ծառից են ճանաչում»:
3) Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել Աշնանամուտին և քրքրել հին հուշերը:
4) Սև գիշե՜ր և հուշե՜ր և խոհե՜ր անհամար, Մոռացված երազներ, շուշաններ թառամած:

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Անհրաժեշտ է հաշվի առնել նրանց կարծիքը, ովքեր լավագույնս տիրապետում են այդ գործին:*
   Անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործին լավագույնս տիրապետողների կարծիքը:
2) *Կառամատույցից ես տեսնում էի, թե ինչպես է խարիսխը կամաց-կամաց դուրս գալիս ծովից:*
   Կառամատույցից ես տեսնում էի կամաց-կամաց ծովից դուրս եկող խարիսխը:
3) *Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:*
   Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:
4) *Թագավորի այցելությունները Ուտիք այնքան հաճախակի դարձան, որ կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:*
   Թագավորի այցելությունները Ուտիք արքունիքի տիկնանց շրջանում կասկածներ արթնացնելու չափ հաճախակի դարձան:

60 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Նա շատ էր տխրում, որ հնարավորություն չուներ մշտապես բնակվելու բնության այդ խաղաղ անկյունում: *(պատճառի պարագա)*
2) Նահապետ Քուչակի քերթությունը ապացուցում է, որ մեր ժողովուրդն ընդունակ է կենսուրախության ու մեծ թռիչքների: *(ուղիղ խնդիր)*
3) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից ինքը բաժանվել էր պատանության տարիներին: *(անջատման անուղղակի խնդիր)*
4) Նրանք ծանոթացան այն օրը, երբ Աստղիկը կայարան էր գնացել՝ ամուսնուն դիմավորելու: *(որոշիչ)*

61 **Պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Մ. Նալբանդյանի «Մանկության օրեր» բանաստեղծության հերոսը կարծում է, որ կտրիճի ձեռքին ոչ թե քնար, այլ սուր է հարկավոր:
2) Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոս Լևոնը ինքնասպան է լինում գիշերով կողոպտվելու օրը:
3) Հ. Պարոնյանը բանաստեղծությունների ժողովածու չի գրել:
4) Գ. Զոհրապի «Այրին» նովելի հերոսուհին ամեն իրիկուն գնում էր այն արտը, որտեղից վերջին անգամ Պոլիս էր ճանապարհել ամուսնուն:

62 **Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Նստում էին և սպասում
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ծաղիկ եզան
Զանգը ծլնգար:

1) «Անձրև»
2) «Պապը»
3) «Օրը մթնեց»
4) «Չես ասի ոչ մի բառով»

63 **Տրված բառերից քանի՞սն են բարդաձանցավոր.**

տրտմաշուք, հակոտնյա, չվացուցակ, խելահեղորեն, խմբագրատուն, վերջնախաղ, վայրէջք, աներկբա, սրտմաշուկ:

64 **Տարբերակներից քանիսո՞ւմ նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Շատ տարիներ են անցել այն օրից. այժմ իմ արածն ինձ որոշ չափով միամտություն է թվում, և ես գրականության մեջ գտել եմ իմ նշանաբանը:

- **շատ** - ածական, դրական ատիճան, **թվում է -** անկատար ներկա, ներգործական սեռ
- **անցել են -** սահմանական եղանակ, չեզոք սեռ, **այժմ** - ժամանակի մակբայ
- **իմ -** անձնական դերանուն, սեռական հոլով, **արածն** - հարակատար դերբայ, անկանոն բայ
- **որոշ** - որոշյալ դերանուն, **մեջ -** կապ, հետադրություն
- **տարիներ -***ի* հոլովման գոյական, **գտել եմ -** դիմավոր բայ, ածանցավոր

65 **Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա:**

Հետո պարզվեց, որ դրանք, իրոք, վաճառականներ են. հույն սպասավորներին կաշառք տալով՝ գալիս են այնտեղ՝ հայոց թագավորին և նրա մարդկանց ապրանք վաճառելու: Հույն, սիրիացի և եգիպտացի վաճառականները, երբ լսում էին արմենների թագավորի գալը, միջնորդներ էին ուղարկում՝ ապրանքներ առաջարկելու և ասելու նրան, որ կարող են թագավորի պատվին էժան տալ:

66 **Նշել այն բառերի համարները, որոնցում արմատի հնչյունափոխություն կա.**

1. տեսչություն, 2. լսարան, 3. կպչուն, 4. մրահոն, 5. տուժել, 6. սփռոց, 7. սառցադաշտ, 8. փախստական, 9. ակնթարթ:

67 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Հոմերոսի մարդկությանը հիացրած պոեմները հին աշխարհի արձագանքն են՝ հունական շողշողուն առասպելների տեսքով:
2. Դարաշրջանի վաղնջական շունչը, սակայն, տիրել էր նրանց՝ թևաթափ արել. հաջողությունը հետզհետե թեքվում էր նոր ցեղի կողմը:
3. Մեր ուղեվարը՝ շատ գեղեցիկ մի թրքուհի՝ Ստամբուլի համալսարանն ավարտած, ամենայն մանրամասնությամբ պատմում էր համարյա բոլոր որմնանկարների ու խճանկարների մասին:
4. Բացված ձեռագրի մի կեսը թվում է՝ կապույտ ստվերի մեջ է, մյուսը՝ երկաթյա եռաժանի մոմակալի դեղնակարմիր կայծկլտուքների տակ:
5. Նրանից քիչ հեռու՝ կաղնեփայտե սևացած գրակալի առջև՝ կապարե գրիչը ատամների մեջ սեղմած, քսանամյա Աստվածատուրը թերթում էր հայ-լատիներեն բառարանը:

68 **Մտքերից որո՞նք են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Մարդկությունը հին աշխարհի ճարտարապետական կոթողներից յոթին հրաշալիքներ է անվանել: Դրանցից մեկը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է՝ ամբողջովին կառուցված սպիտակ մարմարից:

Եգիպտոսում իշխող Պտղոմեոս թագավորը որոշում է լուսավորել Ալեքսանդրիայի նավահանգիստը՝ կառուցել մի ուղեցույց աշտարակ, որպեսզի ականակիր գիշերներին քաղաքին մոտեցող նավերը կարողանան շրջանցել ժայռոտ խութերը: Միևնույն ժամանակ աշտարակը ծառայում էր որպես դիտակետ: Նրանում տեղադրված հայելիները հնարավորություն էին տալիս հայտնաբերելու թշնամիների նավերը:

Հետաքրքիր է «փարոս» անվան ծագումը: Աշտարակը հիմնվեց ափամերձ մի կանաչազարդ կղզյակի վրա, որն առագաստի տեսք ունենալու պատճառով կոչվում էր Ֆարոս, այսինքն՝ առագաստ: Երբ կղզու վրա կառուցեցին լուսատու աշտարակը, այն նույնպես սկսեցին այդպես անվանել:

Հետագայում «ֆարոս» բառն արդեն ձեռք բերեց այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը (այն մեզանում ի հայտ է եկել ավելի ուշ) փոխարինվեց «փ» հնչյունով:

1. Փարոսը ծառայում էր Ալեքսանդրիայի նավահանգիստը թշնամիների հարձակումներից ապահով դարձնելուն:
2. Քանի որ կառուցված աշտարակը առագաստի տեսք ուներ, կոչվեց Ֆարոս, որն էլ հետագայում ձեռք բերեց այժմյան իմաստը:
3. Պտղոմեոսը որոշեց ուղեցույց աշտարակ կառուցել, քանի որ գիշերներով Ալեքսանդրիային մոտեցող նավերի ճանապարհը վտանգավոր էր:
4. Հին աշխարհի յոթերորդ հրաշալիքը Ալեքսանդրիա քաղաքի հանրահայտ փարոսն է:
5. Քանի որ այն ժամանակ հայերենում *Ֆ* հնչյուն չկար, փոխառյալ *«ֆարոս»* բառը տառադարձվեց որպես *«փարոս»:*

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադասի՝ գոյականով կամ անձնական դերանունով արտահայտված անդամին:
2. Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կարող է ունենալ միայն այն գերադաս նախադասությունը, որում ներգործական սեռի բայ կա:
3. Բաղադրիչ ստորադաս նախադասությունները կարող են իրար համադաս լինել:
4. Պարզ նախադասության բոլոր անդամները կարող են արտահայտվել ստորադաս նախադասությամբ:
5. Բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի կազմում գտնվող ***որ, երբ, ինչպես, ուր*** բառերը պարտադիր հարաբերական դերանուններ են:
6. Ստորոգելի ստորադաս նախադասության գերադաս նախադասությունը պարտադիր ունենում է բաղադրյալ ստորոգյալ:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հարակատար, ենթակայական և անորոշ դերբայները հոլովվում են ***ի*** արտաքին հոլովմամբ:
2. Հայերենում բոլոր բայերը ունեն անորոշ դերբայ:
3. Անորոշ դերբայը օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հետ կազմում է սահմանական եղանակի ժամանակաձևերից երկուսը:
4. Որոշ բայերի հարակատար և ենթակայական դերբայները դարձել են գոյական-ներ:
5. Բոլոր բայերի անորոշ դերբայի սեռականը և ապակատար ձևաբայը ձևով նույնն են:
6. Բոլոր բայերի անկատար ձևաբայը կազմվում է -***ում*** վերջավորությամբ: